



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



Ի ՊԱՏԻՒ ՎԵՐԱՓԱՌՈ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՎԻԱՐԱԿՈՍԱՅԻ ՍԱՐՁԱԾ ԸՆԹՐԻՔԸ ՀԵՏԱԶՐԵՐԱԿԱՆ ԶՐՈՅՑԻ ԱՌԻԹ

Լու Անձելըսի քաղաքապետ Անթոնիոյ Վիարակոսայի նախաձեռնութեամբ եւ հրաւերով, ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին տեղի ունեցած ընթրիքի ընդունելութիւնը վերածուեցաւ Միջին Արեւելքի երեք կրօնըներու ներկայացուցիչներու միջեւ ուշագրաւ հանդիպումի ու խորհրդակցութեան առիթի, որ ընդգրկեց անմիջականորեն հայութիւնը ու ընդհանրապէս Լու Անձելըսի ընկերութիւնն ու միջին արեւելեան իրադարձութիւնները:

Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութեան առիթով, Լու Անձելըսի քաղաքապետը իր բնակարանին՝ Getty House-ի մեջ ընթրիք մը սարքած էր Երկուշաբթի, 17 Յոկտեմբերի երեկոյեան: Վեհափառ Հայրապետին ու Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողքին, հրաւիրուած էին քրիստոնեայ, իսլամ եւ հրեայ համայնքներու կրօնական առաջնորդներ ու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Թեմիս ժողովականութեան անդամներ ու բարերարներ: Ներկայ էին Ասորի Ուղղափառ համայնքի Լու Անձելըսի Առաջնորդ Գերշ. S. Եռιճին Զափլան Վրբեպիսկոպոսը, Մկրտչական Եկեղեցին՝ Հայր Ուկիլիզմ Մընո Քեմփաէլ, Շաբրի Մարք Տայըմընտ, Իմամ Ճիհատ Թըրք, Ս. Սոֆիա Եկեղեցւոյ հովիւ Հայր Ճոն Պաքաս, Ղըպտի Ուղղափառ համայնքի Ներկայացուցիչ Հայր Էնթընի Աթալլա եւ այլ հոգեւորականներ, իսկ մեր ժողովականութենէն՝ Տեարք Խաժակ Տիգրանեան, Վահե Եագուպեան, Վահրիճ Փիլաւճեան, Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի Ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան, Մուրատ Թօփալեան, ինչպէս նաեւ Տեարք Վարանդ Մելքոնեան եւ Հերի Նաճարեան:

Զաղաքապետը յայտարարեց, թէ առաջին անգամն է որ Եկեղեցիի մը հոգեւոր պետը կը հիւրընկալէ իր բնակարանին մէջ:

ԳԼՈՒԽ ԳԼԽԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Զաղաքապետ Վիարակոսա առաջին հերթին առանձնացաւ Վեհափառ Հայրապետին ու Առաջնորդ Միբազանին հետ, գլուխ գլուխ հանդիպումի մը համար: Ան ողջունեց Վեհափառ Հայրապետին ներկայութիւնն ու Լու Անձելըսի շրջանին շնորհած հովուապետական

այցելութիւնը, ու մեկնելով Նորին Ս. Օծութենէն իր քաղաք տպաւորութիւններէն՝ դրուատիքով խօսեցաւ Հայրապետին պարզութեան ու համեստութեան մասին:

Անոնք ապա միացան ընթրիքի հիւրերուն, ուր քաղաքապետը անգամ մը եւս ողջունեց Վեհափառ Հայրապետն ու ներկաները, յայտարարելով, որ առաջին անգամն ըլլալով՝ իր բնականարին մէջ հիւր կ'ունենայ հոգեւոր պետ մը:

Տարբեր կրօնըներու եւ համայնքներու ներկայացուցիչները մէկ սեղանի շուրջ համախմբող երեկոն վերածուեցաւ հետաքրքրական զրոյից, ձեւով մը՝ միջ-կրօնական երկխօսութեան, որուն մասնկացութիւն բերաւ նաեւ հիւրընկալը: Ծեշտուեցաւ, որ թէեւ կրօնըներու միջեւ կան տարբերութիւններ, սակայն կենսական են փոխադարձ յարգանքը, վստահութեան մթնոլորտի ստեղծումն ու գոյակցութեան ոգիի տարածումը: Վեհափառ Հայրապետը, մեկնելով իր ապրած փորձառութիւններէն, պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Մրտի խօսք մը արտասանելով, հիւրընկալ քաղաքապետը դրուատիքով խօսեցաւ Վեհափառ Հայրապետին, ինչպէս նաեւ Լոս Անճելըսի զարգացման մէջ հայութեան ներդրումին մասին: Յուսկ՝ Վեհափառ Հայրապետն ու քաղաքապետ Վիարակոսա յուշանուերներ փոխանակեցին:

MAYOR ANTONIO VILLARAIGOSA HOSTS A DINNER AT GETTY HOUSE IN HONOR OF HIS HOLINESS CATHOLICOS ARAM I

On the evening of Monday, October 17, 2011, Los Angeles Mayor the Honorable Antonio Villaraigosa hosted a dinner for His Holiness Catholicos Aram I at his official residence, the Getty House.

His Holiness was accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian. Among the invited guests were leaders of the Christian, Muslim, and Jewish faiths, including H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan (Syriac Orthodox Church), Pastor William Monroe Campbell (Mr. Gilead Missionary Baptist Church), Rabbi Mark Diamond (Board of Rabbis), Imam Jihad Turk (Religious Director, Islamic Center of Southern California), Pastor Jim Tolle (Church on the Way), Very Rev. Fr. John Bakas (Dean, St. Sophia Cathedral), Rt. Rev. Mary Glasspool (Episcopal Diocese), and Fr. Antony Attallah (Coptic Orthodox Diocese). Guests from the Prelacy included Central Executive Council members Khajag Dikjian and Vahe Yacoubian, Executive Council member Vahrij Pilavjian, ARF CC Chair Avedik Izmirlian, Mourad Topalian, Varant Melkonian, and Harry Nadjarian.

Mayor Villaraigosa first had a private meeting with His Holiness and the Prelate, after which they joined the guests for dinner.

The Mayor welcomed His Holiness, announcing that it was the first time he was hosting a spiritual leader at his residence.

With leaders from the various faiths gathered around one table, the evening included interesting dialogue on ecumenical and inter-faith relations. It was stressed that although there are differences among the faiths, there must always be mutual respect. Given his vast experience in the ecumenical arena, His Holiness answered questions addressed to him by the guests.

In his remarks, the Mayor spoke highly of His Holiness and also on the contributions of the Armenian community in Los Angeles.

The evening concluded with an exchange of mementos.